## *1.2.4. Տրանսպորտ*

***Ավտոմոբիլային տրանսպորտ***

***Բեռնափոխադրումներ:*** 2013թ. հունվար-սեպտեմբերին, ըստ տնտեսավարող սուբյեկտներից ստացված վիճակագրական հաշվետվությունների տվյալների և չհաշվառվող դաշտի լրահաշվարկի, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը կազմել է 1335.7 հազ. տոննա, որը 2012թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ աճել է 2.7 անգամ:

***Բեռնաշրջանառություն:*** Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառությունը 2013թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 27547.7 հազ. տոննա-կմ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 21.7 տոկոսով:

***Ուղևորափոխադրումներ:*** 2013թ. հունվար-սեպտեմբերին հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը կազմել է 18136.1 հազ. մարդ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 16715.3 հազ. մարդու դիմաց:

*Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը ըստ շրջանների, 2012-2013թթ. հունվար-սեպտեմբերին*

*/ հազար մարդ/*

| | 2012թ. հունվար-սեպտեմբերին | 2013թ. հունվար-սեպտեմբերին | Աճի տեմպը, տոկոսներով |
|---|---|---|---|
| ***Ընդամենը*** | **16715.3** | **18136.1** | **108.5** |
| ք.Ստեփանակերտ | 14788.2 | 15811.4 | 106.9 |
| Ասկերան | 886.3 | 961.6 | 108.5 |
| Հադրութ | 137.1 | 155.8 | 113.6 |
| Մարտակերտ | 179.1 | 192.2 | 107.3 |
| Մարտունի | 185.9 | 232.9 | 125.3 |
| Շահումյան | 2.1 | 2.8 | 133.3 |
| Շուշի | 514.8 | 750.6 | 145.8 |
| Քաշաթաղ | 21.8 | 28.8 | 132.1 |

***Ուղևորաշրջանառություն:*** Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառությունը 2013թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 141743.7 հազ. ուղևոր-կմ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 13.9 տոկոսով:

*Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը ըստ շրջանների, 2012-2013թթ. հունվար-սեպտեմբերին*

*/ հազար ուղևոր-կմ/*

| | 2012թ. հունվար-սեպտեմբերին | 2013թ. հունվար-սեպտեմբերին | Աճի տեմպը, տոկոսներով |
|---|---|---|---|
| ***Ընդամենը*** | **124467.4** | **141743.7** | **113.9** |
| ք.Ստեփանակերտ | 85668.5 | 102094.4 | 119.2 |
| Ասկերան | 10737.4 | 10877.0 | 101.3 |
| Հադրութ | 5994.6 | 6282.3 | 104.8 |
| Մարտակերտ | 6675.9 | 6822.8 | 102.2 |
| Մարտունի | 7939.9 | 8194.0 | 103.2 |
| Շահումյան | 116.1 | 121.5 | 104.7 |
| Շուշի | 5277.5 | 5288.0 | 100.2 |
| Քաշաթաղ | 2057.5 | 2063.7 | 100.3 |

*Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը ըստ շրջանների, 2013թ. հունվար-սեպտեմբերին (%)*



***Խողովակային տրանսպորտ***: 2013թ. հունվար-սեպտեմբերին խողովակային տրանսպորտով հանրապետությունում ներկրված բնական գազի բեռնափոխադրումների ծավալը կազմել է 21034.2 տոննա՝ 2012թ. հունվար-սեպտեմբերի 21538.7 տոննայի դիմաց:

***Ճանապարհատրանսպորտային պատահարներ:*** Հանրապետությունում 2013թ. հունվար-սեպտեմբերին, ըստ ԼՂՀ կառավարությանն առընթեր ԼՂՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության տվյալների, արձանագրվել է շարժակազմի հետ կապված ճանապարհատրանսպորտային պատահարների 49 դեպք, որից՝ 39-ը տեղի է ունեցել տրանսպորտային միջոցների վարորդների, 6-ը՝ փողոցների և ճանապարհների անբավարար վիճակի հետևանքով, 2-ականը՝ հետիոտների կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտման և տեխնիկական անսարք տրանսպորտային միջոցների շահագործման պատճառով:

Ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով 2013թ. հունվար-սեպտեմբերին վիրավորվել է 61 և զոհվել՝ 11 մարդ: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը ավելացվել է 63.3 տոկոսով: Զոհվածների թիվը 2012թ. նույն ժամանակաշրջանում կազմել է 4 մարդ, իսկ վիրավորների թիվը՝ 46 մարդ:

Ճանապարհատրանսպորտային պատահարների մեծամասնությունը տեղի է ունեցել Մարտունու շրջանում՝ 22.4 տոկոսը կամ 11 պատահար, որի հետևանքով վիրավորվել է՝ 15 մարդ:

*Ճանապարհատրանսպորտային պատահարներն ըստ շրջանների,*
*2012-2013թթ. հունվար-սեպտեմբերին*

| | 2012թ. հունվար-սեպտեմբերին | | | 2013թ. հունվար-սեպտեմբերին | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Պատահարների քանակը, միավոր | Տուժվել են, մարդ | | Պատահարների քանակը, միավոր | Տուժվել են, մարդ | |
| | | զոհվել են | վիրավորվել են | | զոհվել են | վիրավորվել են |
| ***Ընդամենը*** | ***30*** | ***4*** | ***46*** | ***49*** | ***11*** | ***61*** |
| ք.Ստեփանակերտ | 11 | 2 | 12 | 7 | 1 | 6 |
| Ասկերան | 6 | - | 8 | 10 | 2 | 12 |
| Հադրութ | 3 | - | 4 | 5 | 2 | 11 |
| Մարտակերտ | 5 | 1 | 13 | 9 | 5 | 10 |
| Մարտունի | 1 | - | 1 | 11 | - | 15 |
| Շահումյան | 1 | - | 4 | - | - | - |
| Շուշի | 1 | - | 2 | 2 | - | 3 |
| Քաշաթաղ | 2 | 1 | 2 | 5 | 1 | 4 |

*Ճանապարհատրանսպորտային պատահարները և տուժվածները,*
*2013թ. հունվար-սեպտեմբերին*

| Ցուցանիշների անվանումը | Պատահարների քանակը, *միավոր* | Տուժել են, *մարդ* | | | |
|---|---|---|---|---|---|
| | | զոհվել են | որից՝ իգական սեռ | վիրավորվել են | որից՝ իգական սեռ |
| **ՃՏՊ-*ընդամենը*** | **49** | **11** | **-** | **61** | **3** |
| *որոնցից*՝ տուժել են մինչև 16 տարեկան երեխաներ | 3 | 1 | - | 2 | - |
| ՃՏՊ ճանապարհային երթևեկության կանոնների խախտման հետևանքով | | | | | |
| **տրանսպորտային միջոցների վարորդներ-*ընդամենը*** | **39** | **9** | **-** | **45** | **3** |
| *այդ թվում*՝ ոչ սթափ վիճակում | - | - | - | - | - |
| *ընդամենից ըստ պատկանելիության*՝ | | | | | |
| իրավական անձանց (հիմնարկությունների և ձեռնարկությունների) | *9* | *1* | - | *10* | *2* |
| *այդ թվում*՝ վարորդներ ոչ սթափ վիճակում | - | - | - | - | - |
| ֆիզիկական անձանց (քաղաքացիների) | *30* | *8* | - | *35* | *1* |
| *այդ թվում*՝ վարորդներ ոչ սթափ վիճակում | - | - | - | - | - |
| **փողոցների և ճանապարհների անբավարար վիճակը նպաստել է -ընդամենը** | **6** | **1** | **-** | **12** | |
| **Տեխնիկական անսարք տրանսպորտային միջոցների շահագործման պատճառով** | **2** | **1** | **-** | **2** | **-** |
| **Հետիոտնի կողմից** | **2** | **-** | **-** | **2** | **-** |

*Ճանապարհատրանսպորտային պատահարների և տուժվածների թիվը, 2013թ. հունվար-սեպտեմբերին*

| | Պատահարների քանակը, միավոր | | Տուժվել են, մարդ | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | զոհվել են | | վիրավորվել են | |
| | Ընդա-մենը | *այդ թվում`* հարբած վիճակում գտնվող վարորդների պատճառով | Ընդա-մենը | *այդ թվում`* հարբած վիճակում գտնվող վարորդների պատճառով | Ընդա-մենը | *այդ թվում`* հարբած վիճակում գտնվող վարորդների պատճառով |
| **Ընդամենը պատահարներ** | **49** | **-** | 11 | **-** | 61 | **-** |
| *որից`* | | | | | | |
| տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ՃԵԿ-ի խախտման պատճառով | 39 | - | 9 | - | 45 | - |
| *այդ թվում`* | | | | | | |
| *բեռնատար ավտոմեքենաներ* | *4* | - | *1* | - | *3* | - |
| *ավտոբուսներ* | *1* | - | - | - | *1* | - |
| *թեթև մարդատար մեքենաներ* | *31* | - | *5* | - | *40* | - |
| *տրակտորներ և այլ ինքնագնաց մեխանիզմներ* | *2* | - | *1* | - | *1* | - |
| *մոտոցիկլետներ* | *1* | | *2* | - | - | - |

*Փոստային և սուրհանդակային ծառայության ցուցանիշները*

| | Չափի միավոր | 2013թ. հունվար-սեպտեմբերին | 2013թ. հունվար-սեպտեմբերը 2012թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ,% |
|---|---|---|---|
| **Առաքվել է նամակներ, բացիկներ և ծանրոցածրարներ, *ընդամենը*** | **հատ** | **49228** | **107.0** |
| *այդ թվում`* | | | |
| ներհանրապետական | -“- | 39337 | 107.0 |
| միջազգային | -“- | 9891 | 106.8 |
| *որից` ԱՊՀ երկրներ* | -“- | *3559* | *90.4* |
| **Առաքվել են ծանրոցներ, *ընդամենը*** | **-“-** | **7** | **87.5** |
| *այդ թվում`* | | | |
| ներհանրապետական | -“- | - | - |
| միջազգային | -“- | 7 | 87.5 |
| *որից` ԱՊՀ երկրներ* | -“- | *7* | *87.5* |